ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Գնել Մկրտչյանը, Ալիկ Մարտիրոսյանը, Արմեն Կոստանյանը, Էդգար Վարդանյանը, Զարուհի Կիրակոսյանը, Նորայր Զախարյանը, Սամվել Զաքոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր Գավառ Համայնքի Ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյանը

Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻԱՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Գավառ համայնքի ավագանու իններոդ նստաշրջանի երկրորդ նիստի օրակարգը:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 177-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման 2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 178-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի, «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի գրությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Գավառի համայնքապետարանի 2025թ. բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի այլ սոցիալական ծրագրեր գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ տրամադրել դրամական հատուցում.
Ավետիսյան Մեխակ Տիգրանի 100 000 / մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ
գումարը ստանալու է որդին՝ Վլադիմիր Մեխակի Մինասյանը:
Իսպիրյան Թագուշ Սերոբի 100 000 /մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ

գումարը ստանալու է որդին՝ Վալոդ Սուրիկի Իսպիրյանը:
Ընդամենը ՝ 200 000 /երկու հարյուր հազար / ՀՀ դրամ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 179-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 26.09.2025թ. եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան բուժ. սպասարկում իրականացնող կազմակերպությանը, Գավառ քաղաքի Ս. Աղեկյան փ. տ 31 հասցեի բնակիչ Գագիկ Գուրգենի Վարդանյանին սուր ողնաշար-ողնուղեղային վնասվածքների օրթոպեդիկ ֆիքսացիայով վիրահատությունները իրականացնելու նպատակով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 180-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 26.09.2025թ.եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեովն նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 78 000 (յոթանասունութ հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան իրավաբանական կազմակերպությանը՝ 2025 թվականի օգոստոսի 24-ին Գավառ քաղաքի Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի թիվ 8 հասցեի բնակիչ՝ Ժորա Բաբկենի Բոզիկյանի բնակարանում բռնկված հրդեհի հետևանքով վառված նախամուտքը վերականգնելու նպատակով /դուռ տրամադրելով/:
2. Որոշումն ուշի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 181-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 26.09.2025թ.եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան բուժ սպասարկում իրականացնող կազմակերպությանը, Գավառ համայնքիՆորատուս բնակավայրի Գ.Լուսավորչի փողոց տուն 6 հասցեի բնակիչ՝ Մնացական Հովհաննեսի Հովհաննիսյանի վիրահատությունը իրականացնելու նպատակով: Ախտորոշումը՝ դիֆուզտոքսիկ խպիպ 4-րդ աստիճան:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 182-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 26.09.2025թ.եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան ծառայություն մատուցող իրավաբանական անձին Գավառ քաղաքի Պետրովի փողոց 8 նրբանցք տուն 8 հասցեի բնակիչ Գոհար Ռուստամի Խաչատրյանի աշխատանքային զբաղվածությունն ապահովելու նպատակով տրամադրել հավի ինկուբատոր:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 183-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 02.10.2025թ.եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել Գավառ համայնքի Լճափ բնակավայրի 1-ին փողոց, 2-րդ նրբանցք հասցեի բնակիչ Գարիկ Արտեմի Սիմոնյանին՝ որպես բազմազավակ ընտանիքի հայր, նրա ընտանիքը բաղկացած է 9-ը հոգուց:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 184-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 02.10.2025թ.եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել Գավառ քաղաքի Հ. Աբրահամյան 1-ին փողոց, տուն 41 հասցեի բնակիչ Արտյոմ Դավիթի Մուխսյանի Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կահիրե քաղաքում հոկտեմբերի 4-ից 10-ը անցկացվող պարաձանրամարտի Աշխարհի երիտասարդների և պատանիների առաջնության մասնակցության նպատակով: Գումարը վճարել ծառայություն մատուցող «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» ՀԿ-ին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 185-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 02.10.2025թ.եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան իրավաբանական կազմակերպության շինարարական նյութեր տրամադրելու նպատակով: Գավառ քաղաքի Գ. Միքայելյան 2-րդ նրբանցք տուն 9 հասցեի բնակիչ Հարփիկ Արսենի Մուրադյանի բնակարանը 3-րդ կարգի վթարային է և կարիք ունի վերանորոգման: Հարփիկ Արսենի Մուրադյանի որդին՝ Արսեն Արտեմի Պետրոսյանը անհետ կորել է ԼՂՀ -ում՝ զին. ծառայության ընթացքում

1996 թվականին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 186-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԳԱՎԱՌ «ԲԱՅԱԶԵՏ ՌՈՍ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ 05-001-1133-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 9.2174 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ՝ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

(Զեկ. ՆՈՐԱՅՐ ՄՈՒԽՍՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20,27,և 28,1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով 05-001-1133-0026 կադաստրային ծածկագրով գույքի սեփականատեր «ԲԱՅԱԶԵՏ ՌՈՍ» ՍՊԸ գործադիր մարմնի ղեկավար Ղևոնդ Կամոյի Բաբայանի դիմումը հասցեագրված Գավառ համայնքի ղեկավարին նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու վերաբերյալ՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի 05-001-1133-0026 կադաստրային ծածկագրով «ԲԱՅԱԶԵՏ ՌՈՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 9.2174հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատեսքից փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատեսքի, իսկ վարելահողի գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատեսքի՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 187-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի նոյեմբերի 10-ը ժամը 14^{00}-ն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 188-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼԱՎՐԻԿ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

ՕՀԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՎԱԼՏԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կարինե Մանուկյանը